Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

D.T.C.

Е. В. Гаврь-Аракелянц
Гимназия № 7

05 FEB 2007

ԱՆՏՕՆ ՉԵԽՈՎ

№ 8937

ԱՆԻՒՏԱՆ

1002/5710

Թարգմ. ՑԱՐՈՒԹԻՒՆ ՆՍԱՑԵԱՆ

ТИФЛИССКАГО СОБР. БИБЛИОТЕКА

ՏՓԽԻՍ
Տպարան Մովսէս Վարդանեանցի
1902

891.71
Ղ-34
19 ՆՈՅ 2010
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՆԻՏԱՆ

«Լիսարան» կոչուած հիւրանոցի ամենաէժան համարում մի անկիւնից միւսն էր քայլում III-րդ կուրսի բժշկականութեան ուսանող Ստեփան Կլոչկովը և ջանասիրութեամբ անգիր էր անում իւր դասը։ Անդադար, լարուած անգիր անելուց նրա բերանը չորացաւ և ճակատին քրտինք դուրս տուեց։

Պատուհանի մօտ, որի ափերը սառուցով բռնուած էին, աթոռի վրայ նստած էր նրա կենակցուհին — Անիտան, սահեր փոքրիկ նիհար 25 տարեկան աղջիկ, խիստ գունատ, փոքրիկ ճաղատ աչքերով։

Մէջքը կռացրած, նա կարում էր տղամարդի օձիք։ Գործը շտապով էր....

Նախասենեակի ժամացոյցը թոյլ կերպով զարկեց կէսօրուայ երկուսը, իսկ սենեակը դեռ մաքրած չէր։ Ճմռթուած վերմակը, դէս դէն շպրտած բարձերը, զբաղերը, շորերը, մեծ, կեղտոտ կոնքը, որ լի էր սապնաջրով, որի մէջ լողում էին կպեճներ, յատակի վրա աղբը, — բոլորը, կարծես, թափուած էր մի տեղ, դիտմամբ խառնուփնթոր, ճմռթած.....

— Աջ թաքը բաղկացած է երեք մասից... անգիր էր անում նա։ Սահմանները. — վերին մասը կրծքի առաջին պատի վրայ հասնում է մինչև 4—5-րդ ողները, կողքի հար-

16.07.2013

12638

թուքեան վրայ մինչև 4-րդ-ողնը... յետևում մինչև spinascapulae...

Կլօչկօվը աշխատելով մտապատկերել նոր կարդացածը, աչքերը առաստաղին ձգեց։ Պարզ մտապատկեր չստանալով, նա սկսեց շօշափել իւր վերին ողնեերը՝ հաղուստի տակից։

—Այս ողնեերը նման են դաշնամուրի մատներին, ասաց նա. որպէսզի չը շփոթուել հաշուի մէջ, հարկաւոր է անպայման նոցա վարժուել։ Հարկաւոր է շօշափել կըմախքի և կենդանի մարդու վրայ... Սրա, Անիւտա, արի ես գործնականապէս փորձեմ։

Անիւտան թողեց կարը, հանեց վերնաշապիկը և ուղիղ կանգնեց։ Կլօչկօվը նստեց նրա հանդէպ, կնճռոտուեց և սկսեց համարել նրա ողնեերը։

—Հ'ը... Առաջին ողնը չէ շօշափւում... Նա յօդի տակն է.... Ահա սա կրլինի երկրորդ ողնը... Այսպէս.... Ահա սա երրորդը... Ահա սա էլ չորրորդը.... Ի՞նչ ես կուչ գալիս....

—Ձեր մատները սառն են։

—Դէ, դէ...չես մեռնի, մի շարժուիր։ Կարող է սա երրորդ ողնը լինել, իսկ սա չորրորդն է....դու տեսքով նիհար ես, բայց ողնեերը հազիւ են շօշափւում։ Սա երկրորդ...սա երրորդ։ Չէ, այսպիսով կըշփոթուիս և չես կարող քեզ պարզ ներկայացնել...Սիրտուած եմ նկարել. ուր է իմ ածուխը։

Կլօչկօվը վերցրեց ածուխը և նրանով նկարեց Անիւտայի կրծքի վրայ միջանի զուգահեռական գծեր, ողնեերին համապատասխան։

—Հրաշալի է. բոլորը գիտեմ, ինչպէս ափիս վրայ... դէ հիմա պէտք է զարկել, մի կանգնիր։

Անիւտան կանգնեց և բարձրացրեց կզակը Կլօչկօվն սկսեց զարկել մատներով, և այն աստիճան խորասուզուեց իւր գրազմունքի մէջ, որ չընկատեց, թէ ինչպէս Անիւտայի շրթունքները, քիթը և մատները կապտեցին ցրտից։ Անիւտան դողում էր և վախենում, որ բժիշկը, նկատելով իւր դողոցը, կըդադարի ածուխով նկարել և զարկել, ու յետոյ, քնուքիւնը վատ կըտայ։

—Հիմա, ամեն ինչ պարզ է, ասաց Կլօչկօվը դադարելով զարկելուց։ դու այսպէս նստիր և մի սրբիր ածուխը, մինչև որ ես մի քիչ էլ կըսովորեմ։

Եւ բժիշկը դարձեալ սկսեց շրջել և անգիր անել։ Անիւտան, ամբողջ նախշատած սև շերտերը կրծքին, կըծկուելով ցրտից, նստած էր և մտածում էր։ Նա առհասարակ շատ քիչ էր խօսում, միշտ լուռ էր և շարունակ մտածում էր, մտածում...։

Ամբողջ վեց-եօթ տարուայ թափառելու միջոցին այդ կահաւորուած սենեակներում, նա Կլօչկօվ-ի նման հինգ մարդ էր ճանաչում։ Այժմ բոլորը նրանք վերջացրել են դասընթացը, մարդ դարձել, և իհարկէ, ինչպէս օրինաւոր մարդիկ՝ վաղուց են մոռացել իրան։ Նրանցից մէկը ապրում է Փարիզում, երկուսը բժիշկներ են, չորրորդը՝ նկարիչ, իսկ հինգերորդը, ասում են՝ արդէն պրոֆէ-

սոր է։ Կլոչկովը վեցերորդն է։ Շուտով սա էլ կլվերջացնէ դասընթացքը, մարդ կըդառնայ։ Անկասկած ապագան փայլուն է, և Կլոչկովը, հաւանականաբար, մեծ մարդ կըդառնայ, բայց ներկան բոլորովին վատ է.—նա չունի ծխախոտ, չունի թէյ, և շաքարն էլ չորս կտոր է մնացել։ Հարկաւոր է, որքան կարելի է, կարը շուտ վերջացնել, տանել պատուիրողի մօտ և յետոյ ստացած քսան ու հինգ կոպէկով գնել և՛ թէյ, և՛ ծխախոտ։

—Կարելի է մտնել, լսուեց դռան յետևից։

Անիւտան արագութեամբ ուսերին ձգեց բրդեայ թաշկինակը։ Ներս մտաւ նկարիչ Ֆեոֆանովը։

—Ես խնդրով եմ եկել ձեզ մօտ, սկսեց նա, դառնալով Կլոչկովին և դաղանաբար նայելով ճակատի վրայ թափուած մազերի միջով։—Բարութիւն արէք, փոխ տուէք ձեր գեղեցիկ աղջկան երկու ժամով։ Նկարում եմ մի պատկեր, իսկ առանց խոկականի դժուար է։

—Ա՜հ, ուրախութեամբ, համաձայնեց Կլոչկովը, գնա, Անիւտա։

—Ինչ ասես տեսնում եմ այստեղ, յանձը չշնչաց Անիւտան։

—Դէ, բաւական է, մարդը արուեստի համար է խնդրում, և ոչ թէ որևէ դատարկ բաների համար։ Ինչու չօգնել, քանի որ կարելի է։

Անիւտան սկսեց հագնուել։

—Իսկ դուք ինչ էք նկարում, հարցրեց Կլոչկովը։

—Պսիխէյ, լաւ նիւթ է, բայց ափսոս չի դուրս գա-

լիս, ստիպուած եմ շարունակ զանազան կենդանի կանանցից նկարել։ Երէկ նկարեցի մի կապոյտ ոտներով կնոջ։ Ինչու են ձեր ոտները կապոյտ, հարցնում եմ նրան։—Գուլպաներս են ներկում, պատասխանում է նա։

—Իսկ դուք շարունակ անվիր էք անում, բարդաւոր մարդ ես, համբերութիւն ունիս։

—Բժշկականութիւնն այնպիսի բան է, որ առանց անվիր անելու չի կարելի։

—Հըմ...ներեցէք, պարոն Կլոչկով, բայց դուք բոլորովին խողի կերպ էք ապրում, սատանան գիտէ, թէ ինչպէս էք ապրում։

—Այսինքն ինչպէս. ուրիշ կերպ չի կարելի ապրել...հօրիցս ես սատանում եմ ամսական 12 ռուբլի, իսկ այս փողով ապրելը մեծ բան է։

—Այդ այդպէս է...ասաց նկարիչը և զզուելով կընճռոտուեց, բայց յամենայն դէպս կարելի է լաւ ապրել... Զարգացած մարդն անպայման պէտք է էստէտիկ լինի. ճիշտ չէ. իսկ այստեղ ձեզ մօտ սատանան գիտէ, ինչ է, —անկողինը հաւաքած չէ, լուացաջուր, ախտ... երէկուայ փլաւը ափսէի մէջ մնացած... թու։

—Այդ ճիշտ է, ասաց բժիշկը և վիրաւորուեց, բայց Անիւտան ժամանակ չունի այսօր հաւաքելու, կարգաւորելու. ամբողջ ժամանակ զբաղուած է։

Երբ որ նկարիչն ու Անիւտան դուրս եկան, Կլոչկովը պառկեց բազմոցի վրայ և պառկած սկսեց անվիր անել, յետոյ յանկարծ քնեց, և մի ժամից յետոյ արթ-

նանալով, ձեռքը գլխին դրեց ու մռայլուելով սկսեց մը-
տածել։ Նա յիշեց նկարչի խօսքերն այն մասին, որ զար-
գացած մարդն անպայման պէտք է էստէտիկ լինի, և իւր
տարգ ու կարգը յիրաւի այժմ անախորժելի թուաց իրան։
Նա երազում էր իւր ապագան, երբ նա պէտք է ընդու-
նէ իւր հիւանդներին՝ առանձնարանում, թէյ պիտի խմէ
ընդարձակ ճաշարանում, կնոջ ընկերակցութեամբ հասա-
բակութեան մէջ, օրինաւոր կնոջ,—իսկ այժմ այս լուա-
ցաջրով լի կոնքը, որի մէջ լողում էին կպեճներ, ունէր
վերին աստիճանին զզուելի տեսք։

Անիւտան էլ թուաց տգեղ, խղճուկ...և նա վճռեց
բաժանուել նրանից, ինչ էլ որ լինի։

Երբ սա վերադառնալով նկարչի մօտից, հանում
էր ծածկոցը, բժիշկը բարձրացաւ և լուրջ ասաց նրան.

—Ահա թէ ինչ, սիրելիս, նստիր և լսիր. մենք
պէտք է բաժանուինք. մի խօսքով, այլ ևս քեզ հետ ապ-
րել չեմ ուզում։

Անիւտան նկարչի մօտից վերադարձաւ յոգնած, դաղ-
րած. նրա դէմքը, երկար ցրտում կանգնելուց, կծկուել
էր, նիհարել և գունչը սրուել էր, ցցուել։ Բժշկի խօս-
քերին նա ոչինչ չըպատասխանեց և միայն նրա շրթունք-
ները դողդողացին։

—Համաձայնիր, որ վաղ թէ ուշ մենք պէտք է բա-
ժանուինք, ասաց բժիշկը, դու բարի ես, լաւն ես, դու
կըհասկանաս...

Անիւտան կրկին հագաւ ծածկոցը, լուռ փաթաթեց

թղթում իր կարը, հաւաքեց թելերը, ասեղները. չորս
կտոր շաքարի փաթեթը գտնելով պատուհանի վրայ, գը-
րեց սեղանի վրայ գրքերի մօտ։

—Սա ձերն է. շաքար է... ասաց նա ցածր և շուտ
եկաւ, որ արցունքները թաքցնէ։

—Դէ, ինչ ես լալիս, հարցրեց Կլոշկովը։

Նա վրդովուած անցաւ սենեակի միջով և ասաց.

—Տարօրինակ ես դու, ուղիղ չէ, որ դու ինքդ գի-
տես, որ մեզ հարկաւոր է բաժանուել. մի դար խօ չը
պէտք է միասին ապրենք։

Անիւտան արդէն հաւաքեց իր բոլոր կապոցները և
շուտ եկաւ դէպի նա, որ հրաժեշտ տայ, բայց նա խղճա-
հարուեց։

«Թող մի շաքարի էլ այստեղ ապրի, մտածեց նա.
խեղճուկն, թող կենայ մի շաքարի էլ, այնուհետև կըհրա-
մայեմ, որ երթայ»։

Եւ բարկանալով իր բնաւորութիւն չունենալու վը-
րայ, նա խստութեամբ գոռաց նրա վրայ.

—Դէ, ինչ ես կանգնել, գնում ես, գնա, եղիր ոչ,
հանիր ծածկոցդ և մնա։

Անիւտան հանեց ծածկոցը, լուռ, անշշուկ, յետոյ
աչքերը մարրեց, հոգւոյ հանեց և անխօս դիմեց դէպի
իւր մշտական տեղը—պատուհանի մօտ—աթոռի վրայ։

Ուսանողը վերցրեց դասագիրքը և կրկին քայլեց
անկիւնից անկիւն։

—Աջ թաթը բաղկացած է երեք մասից....կրկնում

էր նա, վերին մասը կրծքի առաջի պատի վրայ հասնում է մինչև 4—5-րդ ողները.....

Իսկ նախասենեակում ամբողջ ուժով ով որ գոռում էր.

— Գրիգոր, սամովարը։

Дозволено Цензурою Тифлисъ, 18 Октября 1902 года.

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

«Ազգային գրադարան»
NL0310930

12.638

891.71
9-34